«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 1.

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ԵՐԵՎԱՆ 2019

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) համակարգի վերանայման քաղաքականության նպատակն է շարունակաբար կազմակերպել և իրականացնել Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկում և արդյունքների հիման վրա մշակել անհրաժեշտ բարելավմանը ուղված համալիր միջոցառումներ:

Քոլեջում Որակի ներքին ապահովման համակարգի վերանայումը ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ժամանակային, ֆինանսական և նյութական ռեսուրսների վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում՝ վերանայումը:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հիմք կարող են հանդիսանալ՝

1. Քոլեջի ՈՆԱ քաղաքականությունը,
2. Քոլեջի ՈԱ պատասխանատուի ռազմավարական պլանը,
3. Քոլեջի կառավարչական և ուսումնական գործունեության մշտադիտարկման և գնահատման արդյունքները:
4. Քոլեջի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարծիքները,
5. Քոլեջի ՈԱ պատասխանատուի աշխատանքի վերլուծության արդյունքները (SWOT վերլուծությունը),
6. ՈՆԱ համակարգի բենչմարքինգի արդյունքները:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման գործիքներ և մեխանիզմներ կարող են հանդիսանալ՝

1. ՈՆԱ համակարգի բարելավմանը Քոլեջի տնօրենի հանձնարարականը:
2. Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների շրջանում կազմակերպվող հարցաթերթիկները:
3. Քոլեջի Ընդհանուր ժողովի և Տնօրինական խորհրդի որոշումները:
4. Մշտադիտարկումները:
5. Վերանայմանը ուղղված Տնօրինական խորհրդի որոշումները:
6. Հարցումները:
7. Բաչելավման համալիր միջոցառումները:

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Որակի ներքին ապահովման համակարգը:

Քոլեջի ՈՆԱ պլանավորումը և վերանայումը հիմնված է՝ ՊԻՍԲ մոդելի վրա:



«ՊԻՍԲ» մոդելը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Գործունեության պլանավորում (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ):
- Կառավարման համակարգի վերանայում, արդիականացում (կառուցվածքային ստորաբաժանումների վերանայում):
- Ինստիտուցիոնալ հավատարմագրում:
- Գործող ՄԿԾ-երի, մոդուլային/առարկայական դասընթացների ծրագրերի, դասավանդման մեթոդների պլանավորում, գնահատում և վերանայում:
- Դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատում և բարելավում:
- Ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների կազմակերպում, արդյունքների ամփոփում, վերլուծում և բարելավման պլանի կազմում:
- Քոլեջի գործունեության տարեկան կատարողականի գնահատում և վերանայում:
- Բենչմարքինգ:

2. Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման նպատակը և խնդիրները:

ՈՆԱ համակարգի վերանայման նպատակն է որակի ապահովման համակարգի բարելավումը և կատարելագործումը:

ՈՆԱ համակարգի վերանայման խնդիրներն են երաշխավորել՝

- Քոլեջի ՈՆԱ համակարգի աշխատանքի արդյունավետությունը տարբեր մակարդակներում:
- ՄԿԾ-ի արդիականությունը և հասանելիությունը:
- Քոլեջի դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը:

ՈՆԱ համակարգի վերանայման համար անհրաժեշտ է՝

- որակի ապահովմանն ուղղված ռազմավարության վերանայում և արդիականացում,
- որակի ապահովմանն ուղղված քաղաքականության և ընթացակարգերի վերանայում և բարելավում,
- ՈՆԱ համակարգի կառուցվածքային փոփոխություններ,
- ՄԿԾ-ի գնահատում, վերանայում և բարելավում,
- դասախոսական կազմի աշխատանքի ադյունավետության գնահատում և բարելավում,
- շահակիցների հետ հետադարձ կապի ապահովում: